Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է՝

ընդունելություն 1947-48 ուս. տարվա 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի համար։

Առաջին կուրս կարող են ընդունվել 7-րդ կամ 8-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները։

Երկրորդ կուրս՝ 9-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները։

Երրորդ կուրս՝ 10-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները։

Առաջին կուրս ընդունվողները ենթարկվում են քննության հետևյալ առարկաներից. — Հայոց լեզու (բանավոր և գրավոր), ռուս աբ լեզու (բանավոր և գրավոր), մաթեմատիկա (բանավոր և գրավոր)։

Երկրորդ և երրորդ կուրս ընդունվողները՝ (բացի վերոհիշյալ առարկաներից) նաև Հայոց պատմություն, Հայ Եկեղեցու պատմություն, գրաբար և անգլերեն լեզու։ Տասնամյա կրթություն ունեցողներն ազատվում են հայոց լեզվի, ռուսաց լեզվի և մաթեմատիկայի քննություններից։

Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է. ուսանողներին տրվում է ձրի կրթություն և ամեն հարմարություն (հագուստ, սնունդ, գրենական պիտույք, անկողին)։

Դիմումներն ընդունվում են մինչև օգոս տոսի 25-ը, ամեն օրը ժամը 9-14-ը։

Դիմումի հետ պետք է ներկայացնել 1) ինքնակենսագրություն, 2) ուսման վկայական, 3) ծննդյան վկայական, 4) առողջության և ծաղկի պատվաստման վկայական, 5) 3 լուսանկար (3×4)։

Քննությունները սկսվելու են օգոստոսի 26-ին։

Դիմումները տրվում են Հոգևոր ճեմարանի վերատեսչի անունով (անձամբ կամ փոստով)։

Հասցեն՝ Էջմիածին, Հոգևոր ճեմարան (Հեռ. 1-20)։

Պատվեր 1030

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. վարչության № 2 տպարան, Երևան